
ՀԱՆԴՈՒԹՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

ՏԱԹԵՎԻԿ ՓԻՐՈՒՄՅԱՆ

Վերջին տարիներին «հանդուրժողականություն» հասկացությունը կրել է մի շարք իմաստային փոփոխություններ: Ի՞նչ է հանդուրժողականությունը: Եթե նախկինում այն նույնականացվում էր «համբերատարություն», «ներողամտություն» հասկացությունների հետ, ապա այժմ նրա իմաստային դաշտը ընդլայնվել է: Հանդուրժողականությունը ամենևին էլ չի նշանակում համբերատար վերաբերմունք սոցիալական անարդարությունների հանդեպ, սեփական համոզմունքներից հրաժարում: Կարողանալ ապրել՝ չխանգարելով մյուսներին, հետևել քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին՝ չոտնահարելով այլոց իրավունքներն ու ազատությունները, համբերատար վերաբերվել ուրիշների ազգային առանձնահատկություններին. ահա սրանք են հանդուրժողականության հիմնական ըմբռնումները: Այլ կերպ ասած՝ հանդուրժողականությունը վերացական հասկացություն չէ, այն անմիջական փոխազդեցության մեջ է գտնվում հասարակական կյանքի քաղաքական, սոցիալական, տնտեսական և հոգևոր ոլորտների հետ: Հանդուրժողականությունը ժամանակակից քաղաքացիական հասարակության գլխավոր բարոյահոգեբանական սկզբունքներից է և ընկած է քաղաքական գործունեության բոլոր մակարդակների և ամենից առաջ՝ քաղաքացիական կառավարման գործընթացների հիմքում: Հանդուրժողականության բարձրագույն ձևերի գլխավոր հիմքը քաղաքացիական հասարակությունն է: Քաղաքական հանդուրժողականությունը ժողովրդավարական սոցիոնի քաղաքական մշակույթի կարևորագույն հատկանիշն է, որտեղ ներառված են և՛ պետությունը, և՛ քաղաքացիական հասարակությունը¹: Ինչպես առանձին պետությունների, այնպես էլ ողջ ժողովրդի համար քաղաքացիական հասարակությունը զարգացման կարևորագույն նախապայման է: Ժամանակակից աշխարհը ենթադրում է այնպիսի հասարակություն, որում մարդիկ ընդունում են միմյանց՝ առանց որևէ ազգային, կրոնական, ռասայական և այլ սահմանափակումների: Հանդուրժողականության մշակույթի ձևավորման առումով քաղաքացիական հասարակության դերն ու նշանակությունն այն է, որ բնակչությանը զերծ է պահում զանգվածային հասարակությանը բնորոշ ապակառուցողական գործողություններից, նպաստում է հասարակական կյանքի զարգացմանն ու ներհասարակական համերաշխության մթնոլորտի ձևավորմանը: Քաղաքացիական հասարակության հիմնական խնդիրներից մեկն էլ այն է, որ յուրաքանչյուր քաղաքացու մեջ ձևավորում է այնպիսի գիտակցություն, որի

¹ Տե՛ս **Зайцев А. В.** Политическая толерантность в публичном диалоге государства и гражданского общества. М., 2012, էջ 19:

դեպքում համախմբվածությունն ու հանդուրժողականությունը գիտակցվում են որպես գոյատևման անհրաժեշտ նախապայմաններ: Այս ենթատեքստում հանդուրժողականությունը կարելի է դիտել որպես ունիվերսալ նորմ, որն օգնում է սոցիալական բարդ համակարգերի զարգացմանը, սոցիալական և քաղաքական փոխազդեցությանը: Քաղաքական հանդուրժողականությունը բնորոշ է բոլոր այն երկրներին, որտեղ գործում են ժողովրդավարական ինստիտուտներն ու կարգերը, իսկ դա նշանակում է, որ ժամանակակից աշխարհում հանդուրժողականության սկզբունքին պետք է հետևեն ոչ միայն մարդիկ, այլև պետությունները²:

Քաղաքական համակարգը մի ոլորտ է, որտեղ գերիշխում է հաղթանակի և քաղաքական գերիշխանության ձգտումը: Քաղաքական մրցակցության գործընթացներում կողմերից յուրաքանչյուրը փորձում է ապացուցել իր ճշմարտացիությունը և մերժել հակառակորդի գաղափարները, ինչն էլ հանգեցնում է կոնֆլիկտային իրավիճակների: Քաղաքական կյանքում հանդուրժողականության սկզբունքը կարևորվում է հատկապես քաղաքական կյանքի տարբեր մակարդակներում կոալիցիայի ձևավորման հնարավորություններ ստեղծելու տեսանկյունից: Բանն այն է, որ քաղաքականության ոլորտում որոշակի ծրագրեր իրականացնելու համար քաղաքական դաշտի առանձին ենթահամակարգերի ուժերը (կուսակցություններ, խորհրդարանական խմբակցություններ և այլն) հաճախ բավարար չեն լինում, և ծագում է համագործակցության անհրաժեշտություն: Բայց ենթադրյալ համագործակիցների հետ պայմանավորվելու համար անհրաժեշտ է ցուցաբերել հանդուրժողականություն: Հակառակ դեպքում անխուսափելի են դառնում կոնֆլիկտներն ու հակասությունները, որոնց լուծումը հնարավոր է կամ հանդուրժողականության, կամ էլ հակամարտող կողմերից որևէ մեկի չեզոքացման միջոցով: Այլապես կարող են ծագել այնպիսի իրավիճակներ, երբ հակամարտող կողմերի միջև պայքարը ձգձգվի, և հետևաբար՝ հետաձգվի նաև տվյալ խնդրի լուծումը: Ծագող կոնֆլիկտների հաղթահարման մեթոդաբանության հիմքում ընկած է տվյալ համակարգին բնորոշ քաղաքական մշակույթը:

Ակնհայտ փաստ է, որ ժամանակակից բազմաբևեռ աշխարհում արդյունավետ գործել ու գործառել կարող են միայն այն հասարակությունները, որոնք ղեկավարվում են հանդուրժողականության սկզբունքով, հանգամանք, որ նույնիսկ արևմտյան քաղաքական մշակույթի պարագայում միշտ չի պահպանվում: Խնդիրն առավել հրատապ է հատկապես հետխորհրդային երկրներում, որոնք չունեն քաղաքական հանդուրժողականության փորձ և մշակույթ: Պատահական չէ, որ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո քաղաքական, տնտեսական, գաղափարական, կրոնական, մշակութային բազմակարծության հրամայականը կենսական նշանակություն հաղորդեց հանդուրժողականության խնդրին³: Այս առնչությամբ կարելի է փաստել, որ արդի հայ հասարակությանը և հատկապես նրա քաղաքական համակարգին դեռևս բնորոշ է կոնֆլիկտայնությունը, ինչն էլ մի շարք դժվարու-

² Տե՛ս **Новиков В. И.** Толерантность в современной жизни: реалии и проблемы. М., 2012, էջ 3-5:

³ Տե՛ս **Шалин В. В.** Толерантность. Ростов-на-Дону, 2000, էջ 180:

թյուններ է առաջացնում ժողովրդավարական-քաղաքական մշակույթի և հանդուրժողականության տարածման գործում: Ավելին, հայկական իրականության մեջ անհանդուրժողական մթնոլորտ գոյություն ունի ինչպես հասարակության տարբեր շերտերի, այնպես էլ քաղաքական դաշտի տարբեր թևերի միջև: Քաղաքական ու սոցիոմշակութային նման դիրքորոշումը նպաստում է թշնամական մթնոլորտի ձևավորմանը, ժամանակ առ ժամանակ տեղի է ունենում բացասական լիցքերի պարպում, ինչն էլ, իր հերթին, բացասաբար է անդրադառնում ներազգային կյանքի կազմակերպման ու կանոնակարգման գործընթացների վրա: Նման դեպքերից խուսափելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ղեկավարվել հանդուրժողականության մշակույթի ավանդույթներով և քաղաքական երկխոսության սկզբունքներով: Ներգրավված լինելով քաղաքական, տնտեսական, հասարակական, մշակութային տարբեր միությունների և կազմակերպությունների մեջ՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է ընդունել և հետևել դրանց կանոնադրություններին: Այս պարտավորությունները ավելի են կարևորվում հատկապես արդի համաշխարհայնացման գործընթացների համատեքստում: Համաշխարհայնացումը միջմշակութային և աշխարհաքաղաքական հարաբերությունների հատուկ ձև է, պատմության նոր փուլ, որին բնորոշ են հազարամյակների ընթացքում ձևավորված մշակութային սահմանների վերացումը և ազգային նույնականության հիմքերի խարխլումը⁴: Այս առնչությամբ տեղին է նկատել, որ համակարգային փոխակերպումների ենթարկվող հասարակությունները, ինչպիսին է նաև հայ հասարակությունը, չպետք է բավարարվեն միայն արևմտյան քաղաքակրթությանը բնորոշ ինստիտուտների և նրանց արժեհամակարգի մեխանիկական ընդօրինակմամբ: Փորձը ցույց է տալիս, որ ժողովրդավարության ենթակառուցվածքներն ու ինստիտուտները թեև ավելի արագ են ստեղծվում, բայց դրանց արդյունավետ գործառության համար անցումային հասարակություններում չկան անհրաժեշտ փորձ, կամք ու համապատասխան մշակույթ: Մեր դժբախտությունն այն է, որ հրաժարվեցինք անցյալից, բայց չընդունեցինք ներկան: Հոգեբանական մակարդակում այդ «սոցիոմշակութային դատարկությունը» դրսևորվում է «անցյալի ու ներկայի», «մասնավորի ու հասարակականի», «առասպելի ու իրականության», «արդարության ու հնարավորության», «ապահովվածության և անորոշության» հակադրությունների ձևով, որոնք համակարգային ճգնաժամի առօրյա-իռացիոնալ դրսևորումներ են, և ներազգային ճգնաժամերը վերլուծելիս քաղաքական համակարգը պետք է ուշադրություն դարձնի ոչ այնքան մակրոկառուցվածքներին, որքան դրանց ամենօրյա դրսևորումներին⁵:

Հանդուրժողականությունը համընդհանուր հասարակական երևույթ է, որը տիպավորված է ըստ շարժառիթների և ծագման աղբյուրների: Բնականաբար, տարբեր հասարակություններում այդ շարժառիթները տարբեր են: «Փակ» հասարակություններում (ամբողջատիրական, ավտորիտար), որպես կանոն, մարդկանց իրավունքների սահմանափակումը, անհան-

⁴ Տե՛ս **Хантингтон С.** Столкновение цивилизаций. М., 2003, էջ 19:

⁵ Մանրամասն տե՛ս **Է. Ա. Հարությունյան**, Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, Եր., 2004, էջ 144:

դուրժողականությունը գրեթե հանընդհանուր երևույթ են: Ամբողջատիրական հասարակություններում պետական իշխանությունը կյանքի է կոչում միայն «Ճշմարիտ» որոշումները՝ հաշվի չառնելով քաղաքական ընդդիմադիրների կարծիքը: Այդ տեսակետից ամբողջատիրական համակարգերը կարելի է որակել որպես մի հասարակություն, որտեղ իրավագուրկ մեծամասնությունը հարկադրաբար հանդուրժում է իշխող փոքրամասնությանը: Այստեղ հանդուրժողականությունը անհատի գոյության անհրաժեշտ նախապայման է, կեցության գրավական: Հասարակության (պետության) կործանիչ ճնշմանը ենթարկված, զանգվածային անհանդուրժողականության պայմաններում գտնվող անհատը միայն հանդուրժողականության շնորհիվ կարող է գոյատևել: Փակ հասարակություններում հանդուրժողականությունը վերածվում է մի յուրահատուկ ինքնապաշտպանական ռեակցիայի, որի շարժառիթներն են վախը, ինքնապաշտպանությունը, գոյության պայքարն ու ցանկությունը: Ընդ որում, հանդուրժողականության գերխնդիրը բնավ էլ անհանդուրժողականության ոչնչացումը չէ, այլ վերջինիս հակազդումը, չեզոքացումը, զսպումը, թուլացումը: Այն հանդես է գալիս որպես յուրօրինակ սոցիալ-հոգեբանական շանթարգել կամ թափարգել, որի խնդիրը հանընդհանուր անհանդուրժողականության լիցքաթափումն է: Հանդուրժողականության այս տիպը կարելի է դիտել որպես օրգանական անհրաժեշտություն, որի շնորհիվ անհատի ներսում ձևավորվում են բացասական կրքերի, զգացմունքների, վերաբերմունքի մի համաբույլ և անբավարարվածության զգացում: Այդ բացասական հոգեկիցքի կուտակումը հանգեցնում է կրավորական սոցիալ-քաղաքական դիմադրության և դժգոհության:

Հանդուրժողականության հիմնախնդրի վերլուծության ժամանակ ծագում են մի շարք պարադոքսներ, որոնք առնչվում են հանդուրժողականության ժամանակատարածական սահմանների ճշգրտմանը: Մասնավորապես, հարց է ծագում, թե արդյոք գոյություն ունի անսահման հանդուրժողականություն, թե ոչ: Ինքնին հասկանալի է, որ անսահման հանդուրժողականություն չի կարող լինել: Թե՛ ժամանակային և թե՛ տարածական առումով հանդուրժողականությունը սահմանափակ է և վերջավոր: Գործառույթային առումով հանդուրժողականությունը դիսկրետ է (ընդհատ): Հանդուրժող մարդը չի ընդունում անհանդուրժողականություն, այդ պատճառով էլ անհանդուրժողական վարք է ցուցաբերում: Կ. Պոպերը, փորձելով լուծել այս պարադոքսը, նկատում է, որ անսահման հանդուրժողականությունը ի վերջո կարող է հանգել հանդուրժողականության վերացմանը, քանի որ նման կենսադիրքորոշումը չի կարող հասարակությանը պաշտպանել անհանդուրժողականությունից: Ասվածից հետևում է, որ հանուն հանդուրժողականության հարկավոր է լինել ոչ հանդուրժող անհանդուրժողների հանդես: Այս տեսակետից, օրինակ, անօրինական են բոլոր այն շարժումները, որոնք քարոզում են անհանդուրժողականություն, և օրինական են այն շարժումները, որոնք պայքարում են անհանդուրժողականության, ինչպես նաև նմանատիպ հանցանքների՝ սպանության, երեխաների առևանգման, ստրկավաճառության դեմ⁶: «Անհանդուրժողականության

⁶ См. u **Поппер К.** Открытое общество и его враги. Т. 1. М., 1991, էջ 300:

հանդեպ հանդուրժողականության» խնդրին անդրադառնալիս որոշ հեղինակներ գտնում են, որ անհանդուրժողականության ազատության սահմանները պետք է սահմանափակվեն միայն այն դեպքերում, երբ վտանգվում են սոցիալական ինստիտուտների գործառնությունն ու մարդկանց ազատությունները⁷: Հանդուրժողականությունն ունի պարադոքսալ բնույթ, այսինքն՝ հանդուրժողականության բացակայությունը ավելի նախընտրելի է, քան անսահման հանդուրժողականության առկայությունը, քանի որ հանդուրժողականությունը անհանդուրժողի կողմից ընկալվում է որպես թուլություն և անզորություն, որպես անպաշտպանության և պարտության վկայություն, ինչը ավելի է ուժեղացնում անհանդուրժողի ագրեսիվությունը: Ավելին, նման դեպքերում նա ձգտում է ոչնչացնել հանդուրժողին, ինչը վտանգավոր է ոչ միայն նրա, այլև հասարակության համար: Մի բան ակնհայտ է, որ անսահման հանդուրժողականությունը խթանում է անհանդուրժողականության տարածումը: «Աշխարհի բարոյականացման փորձերը անօգուտ են, քանի որ լավագույններից լավագույնները, նրանց, ում հաջողվում է սեփական կյանքը ենթարկել աշխարհի հիմնական օրենքներին և սկզբունքներին, դրանով իսկ իրենց դատապարտում են լիովին անպաշտպանության»⁸: Այդ պատճառով էլ հանդուրժողականության սկզբունքին անցումը հարկավոր է իրականացնել աստիճանաբար: Ինքնանպատակ կամ աննպատակ հանդուրժողականությունը անհեթեթություն է և հասարակայնորեն վտանգավոր:

Լիովին այլ է հանդուրժողականության տիպաբանությունը «բաց» հասարակություններում: Կ. Պոպերը ենթադրում է, որ բաց հասարակությունում հանդուրժողականությունը համարվում է մարդասիրական և հավասարապաշտական էթիկայի ամենակարևոր սկզբունքը: Նա այդ սկզբունքը ձևակերպում է հետևյալ կերպ. «Հանդուրժողականությունն ցուցաբերել բոլոր նրանց հանդեպ, ովքեր հենց իրենք էլ հանդուրժող են և չեն քարոզում անհանդուրժողականություն»⁹: Այս սկզբունքից մասնավորապես հետևում է, որ անհրաժեշտ է հարգանքով վերաբերվել ուրիշների բարոյական ընտրությանը, եթե, իհարկե, դա չի հակասում հանդուրժողականության հիմնական սկզբունքներին: Բաց հասարակություններում հանդուրժողականությունը ձեռք է բերում լիովին նոր մոտիվացիա և անցում է կատարում անհանդուրժողականությունից դեպի ազատություն: Այստեղ այն հանդես է գալիս որպես հնարավորություն, որպես սոցիալ-քաղաքական, իրավական և հոգևոր պահանջունք:

Ըստ մոտիվացիայի կարելի է առանձնացնել հանդուրժողականության երկու տիպ՝ կիրառական կամ բանական, հոգևոր կամ ապաբանական:

Ժողովրդավարական հասարակություններում առավել տարածված է կիրառական հանդուրժողականությունը, որի հիմքում ընկած են շահի, օգուտի, նպատակահարմարության, բանականության շարժառիթները (ինձ

⁷ Տե՛ս Քոլզ Ժ. Թեորիա սպրաւեժլիւոստի. Նուոսիբիրսկ, 1995, էջ 197:

⁸ Թրոշկին Ե. Ի. Կոլլեկտիւիզմ իլի ցրաժժանսկոե օբշեւո / / "Տոցիոլոցիկեսկիե իսսլեժուանիա", 1991, № 5, ս. 292.

⁹ Քոփքեր Կ., նշվ. աշխ., էջ 320:

դուր չեն գալիս, հակակրանք են առաջացնում ինչ-որ մեկի վարքը, մտածելակերպը, կրոնը, էթնոսը, ռասան, բայց ես հանդուրժում եմ նրանց, քանի որ այդպես են պահանջում հասարակական համակեցության օրենքները և, վերջին հաշվով, բանականությունը): Հանդուրժողականության այս տիպի պահանջումները մեծ է հատկապես իրավական և քաղաքական ուղորտներում, այնտեղ, որտեղ առավել հաճախ սրությամբ բախվում են անձնական և կորպորատիվ խմբային (կորպորատիվ) շահերը:

Քաղաքակրթության բնապատմական զարգացման արդյունք են համարվում մարդկանց ժողովրդավարական կենսակերպի ընդլայնումն ու նրա միաձուլումը քաղաքական ժողովրդավարության հետ: Քաղաքակրթական զարգացման նպատակներից մեկը ազատության, հավասարության և արդարության հաստատումն է, նպատակ, որը հասարակության ժողովրդավարացման հիմնական ուղիներից է: Մեր օրերում ժողովրդավարական կենսակերպի բաղկացուցիչները ընդունում են դրսևորման նոր ձևեր: Թույլ զարգացած կամ զարգացող երկրներում այն պայմանավորված է համաշխարհայնացմամբ, զանգվածային ներգաղթով և քաղաքականության մեջ ժողովրդի ներգրավվածությամբ: Նման պայմաններում հանդուրժողականությունը դառնում է միջնակության փոխհարաբերությունների կարգավորման և փոխըմբռնման կարևոր գործիք: «Հանդուրժողականություն» հասկացությունը բառացի նշանակում է համբերատարություն: «Հանդուրժողականություն» եզրույթի սկզբնական նշանակությունը ցույց է տալիս, որ այն, ինչպես նաև համբերատարությունը և զիջողամտությունը չեն կարող ինքնաբերաբար վերածվել ժամանակակից քաղաքակրթության անհրաժեշտ և լիարժեք սկզբունքի: Հանդուրժողականության բջջային, հիմնաքարային մակարդակը ինքնահանդուրժողականությունն է: Եթե անհատը հանդուրժող չէ ինքն իր նկատմամբ, ապա նա չի կարող խոսել հանդուրժողականություն ցուցաբերելու մասին: Հանդուրժել կարող է միայն ինքնահանդուրժող անհատը (սոցիումը): Հանդուրժողականության տեսանկյունից՝ ժողովրդավարությունը կարելի է որակել որպես մի հասարակություն, որտեղ իշխող մեծամասնությունը հանդուրժում է փոքրամասնությանը: Անհանդուրժողականությունը նմանատիպ հասարակություններում ընկալվում է որպես չարիք, խոչընդոտ և որպես կանոն արժանանում նախ հասարակական դիմադրության, ապա և՛ բացասական վերաբերմունքի:

Ասվածից կարող ենք բխեցնել հանդուրժողականության հետևյալ սահմանումները.

1. Հանդուրժողականությունը (բնականոն) իրավական և քաղաքական պահանջումներ է, առանց որի մարդու հիմնարար ազատությունները չեն գործի: Հանդուրժողականությունն այն հակազդող միջոցն է, որը չեզոքացնում, թուլացնում է անհանդուրժողականության դրսևորումները անհատական և հասարակական մակարդակներում:

2. Հանդուրժողականությունը սահմանափակման ինքնատիպ միջոց է: Անհատը գիտակցաբար սահմանափակում, նվազեցնում է իր պահանջումները, ցանկությունները, հավակնությունները, որոնք հակասում են ուրիշների պահանջումներին և ցանկություններին: Նկատենք, սակայն,

որ այդ սահմանափակումները կարող են լինել միայն ժամանակավոր և չեն առնչվում մարդու իրավունքներին:

3. Հանդուրժողականությունը բանական ջանք է: Հասարակական ներդաշնակությունը և համակեցությունը անհնար են առանց յուրաքանչյուր անհատի կողմից գիտակցված ջանքի՝ ուղղված իր նախապաշարմունքների, մոլորությունների, բարոյությունների հաղթահարմանը: Կան հասարակայնորեն մշակված բարոյական նորմեր և արժեքներ (ընդհանուր կանոններ), որոնք պարտադիր են սոցիումի բոլոր անդամների համար: Եթե անհատը հրաժարվում է ճանաչել այդ նորմերը, խախտում է դրանք, ապա դրսևորում է անհանդուրժողականություն, որը պետք է չեզոքացվի: Քաղաքացին ընկալում է հանդուրժողականությունը որպես բարոյական պարտք: Պարտք՝ հասարակության հանդեպ, որը նրան տվել է հիմնարար իրավունքներ և ազատություններ:

4. Հանդուրժողականությունը ուժեղ կամքի վկայություն է, գիտակցված կամային ակտ: Չպետք է այն շփոթել կամազրկության, ամենաթողության, անտարբերության և անսկզբունքայնության հետ: Ընդհակառակը, միայն ուժեղ կամքի տեր անհատին է տրված հանդուրժելու, մեծահոգություն, անհիշաչարություն դրսևորելու ընդունակություն:

5. Հանդուրժողականությունը միակողմանի գիջում է: Հանդուրժելով հանդուրժող սուբյեկտը հաճախ չի էլ ակնկալում փոխադարձություն: Ելնելով զանազան շարժառիթներից՝ նա գիջում է իր որոշ հավակնություններ:

Այս ըմբռնումները թույլ են տալիս հանդուրժողականությունը ընկալել որպես մի պահվածք և վերաբերմունք, որը կառուցողական է իր նպատակներով և բովանդակությամբ: Նման եզրահամգումն ավելի է ամրապնդվում, երբ ձեռնամուխ ենք լինում հանդուրժողականության երկրորդ և բարձրագույն տիպի՝ հոգևոր հանդուրժողականության ուսումնասիրմանը: Ինչպես նշում է Յ. Հաբերմասը, սկզբնական շրջանում («հանդուրժողականություն» բառը ֆրանսերենը փոխառել է լատիներենից մոտավորապես 16-րդ դարում) «հանդուրժողականություն» հասկացությունը ուներ սահմանափակ իմաստ՝ կրոնական հանդուրժողականություն¹⁰: Իռացիոնալ կամ հոգևոր հանդուրժողականությունը քանակական առումով նվազ հանդիպելի է, սակայն որակական առումով՝ ավելի արժեքավոր, քան կիրառականը: Հանդուրժողականության այս տիպը գործում է միայն հոգևոր ուղորտում: Դրա հիմքում բարու գաղափարն է, իսկ շարժառիթը՝ սերն ու բարի կամքը: Հոգևոր հանդուրժողականությունը լիովին զերծ է բացասական լիցքից: Բարձր հոգու տեր անհատը վեր է կանգնած ամեն տեսակի պայմանականություններից: Նման հանդուրժողականության բարձրագույն դրսևորումը անձնագոհությունն է, երբ անհատը զոհաբերում է իր ամենաթանկ ունեցվածքը՝ կյանքը՝ հանուն ուրիշների լինելիության: Այս հանդուրժողականության մեջ անչափ մեծ է բարոյականի չափաբաժինը: Միայն համաշխարհային կրոններն են մոտենում իդեալական հանդուրժողականությանը: Նրանց հավատո հանգանակները ներառում են հանդուրժողականության բացարձակ ձևեր, որոնց կենսագործումը հնարավոր է

¹⁰ Стів Хабермас Ю. Когда мы должны быть толерантными? О конкуренции видений мира, ценностей и теорий // "Социологические исследования", 2006, №1, էջ 45:

դարձնում բռնությունից զերծ, ներդաշնակ աշխարհի ստեղծումը: Հանդուրժողականությունը ամենաարդյունավետն է, ամենաազդեցիկը: Այն հենքն է, որի վրա հնարավոր է ձևավորել սոցիալ-քաղաքական հանդուրժողականության մեխանիզմներ և երկխոսության ու համագործակցության ուղի հարթել, իրականություն դարձնել խաղաղ մշակույթի ձևավորումը:

Ընդհանրացնելով կարող ենք փաստել՝ ակնհայտ է դառնում, որ, այնուամենայնիվ, բոլոր կարգի վերապահությունների և սահմանափակումների պարագայում անգամ հանդուրժողականությունը ծառայում է ժողովրդավարությանը: Ջարգացած ժողովրդավարական համակարգում հանդուրժողականությունը հանդես է գալիս հասարակական կյանքի բոլոր ոլորտներում և ձևավորում է քաղաքական գործունեության հիմքը:

Բանալի բառեր – *հանդուրժողականություն, քաղաքական մշակույթ, ժողովրդավարություն, քաղաքացիական հասարակություն, բազմակարծություն, քաղաքական հանդուրժողականություն, համաշխարհայնացում*

ТАТЕВИК ПИРУМЯН – Толерантность как важный элемент политической культуры и необходимое условие демократии. – В статье рассматривается институционализация толерантного диалога государства и гражданского общества. Политическая толерантность связывается с наличием конфликта, компромисса и диалогического взаимодействия власти и общества.

Ключевые слова: *толерантность, политическая культура, демократия, гражданское общество, плюрализм, политическая толерантность, глобализация*

TATEVIK PIRUMYAN – Tolerance as Political Culture and Prerequisite of Democracy. – The article considers the process of institutionalization of a tolerant dialogue between the state and civil society. Political tolerance is relevant if there is a conflict, compromise and dialogue between the authorities and the society.

Key words: *tolerance, political culture, democracy, civil society, pluralism, political tolerance, globalization*